ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ց Ու Ց Ու Մ

«13» մայիսի 2020թ. Թիվ 04 - Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՆԿԱՏՄԱՄԲ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման հավելվածի 22-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման մեծաքանակ դեպքերի առկայության պայմաններում լաբորատոր հետազոտությունները պատշաճ կազմակերպելու անհրաժեշտությունը՝

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) նկատմամբ լաբորատոր հետազոտություններ իրականացնել միայն հետևյալ կազմակերպություններում՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»պետական ոչ առևտրային կազմակերպություն, «ՁԻԱՀ-ի

կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց փակ բաժնետիրական ընկերություն և «Նատալի ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ